Նախագահ
Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության
առաջին խորհրդական



Հավերժական ընտանիքի սիրո հույսը

Ամենամեծ պարգևը, որը Երկնային Հայրը պատրաստել է Իր զավակների համար, հավերժական կյանքն է (տես ՎևՈւ 14.7)։ Այդ պարգևը Հայր Աստծո և Իր Սիրելի Որդու ներկայության մեջ ընտանիքների հետ հավերժորեն ապրելն է։ Աստծո արքայություններից միայն ամենաբարձրում՝ սելեստիալում, կշարունակվեն ընտանեկան կյանքի սիրո կապերը։

Բոլոս էլ սիրառատ ընտանիքներում ապրելու ուրախության հույսն ունենք։ Մեզանից ոմանք դեռևս չեն ունեցել նման զգացողություն, սակայն գիտենք, որ հնարավոր է այն ունենալ։ Միգուցե մենք տեսել ենք այն ուրիշների կյանքում։ Մեզանից ոմանց համար էլ ընտանիքի սերն ավելի իրական և թանկ է դարձել, երբ մահը բաժանել է մեզ երեխայից, մորից, հորից, եղբորից, քրոջից կամ սիրող ու սիրված տատիկից ու պապիկից։

Մենք բոլորս էլ հույս ունենք, որ մի օր կարող ենք կրկին զգալ ընտանիքի այդ անդամի ջերմությունը, ում անչափ սիրում և փափագում ենք կրկին գրկել։

Մեր սիրելի Երկնային Հայրը գիտի մեր սրտերը։ Նրա նպատակը մեզ երջանկություն պարգևելն է (տես 2 Նեփի 2.25)։ Ուստի, Նա տվեց Իր Որդու պարգևը, որպեսզի հնարավոր դարձնի երջանիկ ընտանեկան կապերը, որոնք հավերժորեն շարունակվում են։ Քանի որ Փրկիչը ջարդել է մահվան կապանքները, մենք հարություն կառնենք։ Քանի որ Հիսուս Քրիստոսը քավել է մեր մեղքերը, մենք կարող ենք մեր հավատքի և ապաշխարության միջոցով արժանի դառնալ սելեստիալ արքայությանը, որտեղ ընտանիքները հավերժորեն կապվում են սիրով։

Տերը Եղիա Մարգարեին ուղարկեց Ջոզեֆ Սմիթի մոտ, որպեսզի վերականգներ քահանայության բանալիները (տես ՎևՈւ 110)։ Այդ բանալիների հետ եկավ կնքման զորությունը՝ Աստծո մեծագույն պարգևն առաջարկելով Իր զավակներին՝ հավերժական կյանք իրար հետ հավերժորեն կապված ընտանիքներում։

Սա մի առաջարկ է, որն ուղղված է աշխարհ եկող Աստծո յուրաքանչյուր զավակի։ Նրա հոգեղեն զավակների մեկ երրորդը մերժեցին Նրա առաջարկը հոգիների աշխարհում։ Բավարար հավատք չունենալու, ապա բացահայտ ապստամբության պատճառով նրանք ընտրեցին երբեք չճաշակել Երկնային Հոր հավերժական ընտանիքների պարգևի ուրախությունը։

Մեզանից նրանք, ովքեր նախաերկրային հոգևոր աշխարհում անցել են ճակատագրական քննությունը և այդպիսով իսկ որակվել են ստանալու մահկանացու մարմինների պարգևը, հավերժական կյանքի մեծ ընտրությունը դեռևս սպասում է մեզ։ Եթե մենք օրհնված ենք գտնելու վերականգնված ավետարանը, մենք կարող ենք ընտրել ուխտեր կապել Աստծո հետ և պահել դրանք, ինչի շնորհիվ մենք կարժանանանք հավերժական կյանքին։ Եթե մենք տոկանք այդ հավատարմությամբ, Սուրբ Հոգին կհաստատի մեր

հույսը և վստահությունը, որ մենք գտնվում ենք հավերժական կյանքի ուղու վրա՝ հավերժորեն ապրելու ընտանիքների հետ սելեստիալ արքայությունում:

Ոմանց համար այդ հավերժական ուրախությունը կարող է աղոտ թվալ կամ նույնիսկ հույսը կարող է մարել: Ծնողները, երեխաները, եղբայրներն ու քույրերը միգուցե կատարել են ընտրություններ, որոնց պատճառով թվում է, թե նրանք այլևս արժանի չեն հավերժական կյանքին: Դուք նույնիսկ կարող եք մտածել, թե կարող եք արդյոք դեռևս արժանի համարվել Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով:

Աստծո մարգարեն մի անգամ ինձ մի խորհուրդ տվեց, որն ինձ խաղաղություն է տալիս: Ես մտահոգվում էի, որ ուրիշների կատարած ընտրությունները կարող են անհնարին դարձնել, որ մեր ընտանիքը հավերժ միասին լինի: Նա ասաց. «Դուք մտահոգվում եք սխալ խնդրի մասին: Դուք պարզապես պետք է ապրեք սելեստիալ արքայությանն արժանի կյանքով և ընտանեկան ձեռքբերումներն ավելի հրաշալի կլինեն, քան դուք կարող եք պատկերացնել»:

Բոլոր նրանց համար, ում անձնական փորձառությունը կամ ում ամուսնությունն ու երեխաները կամ դրանց բացակայությունը ստվեր են գցում իրենց հույսերի վրա, ես բերում եմ իմ վկայությունը. Երկնային Հայրը ճանաչում և սիրում է ձեզ որպես Իր հոգևոր զավակների: Մինչ դուք նախքան այս կյանքը Նրա և Նրա Սիրելի Որդու հետ էիք, Նրանք ձեր սրտում դրեցին հույս, որը դուք ունեք հավերժական կյանքի համար: Հիսուս Քրիստոսի Քավության զորության և Սուրբ Հոգու առաջնորդության միջոցով դուք կարող եք այժմ զգալ և գալիք աշխարհում կզգաք ընտանեկան սերը, որը ձեր Հայրը և Նրա Սիրելի Որդին շատ են ուզում, որ դուք ստանաք:

Ես վկայում եմ, որ եթե դուք արժանի ապրեք սելեստիալ արքայությանը, մարգարեական խոստումը, որ «ընտանեկան ձեռքբերումներն ավելի հրաշալի կլինեն, քան դուք կարող եք պատկերացնել», կիրականանա ձեր կյանքում:

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Սկզբում կարող եք պատմել նրանց, ում ուսուցանում եք, այն պահի մասին, երբ դուք երախտապարտ եք եղել հավերժական ընտանիքներ ունենալու հույսի համար: Հրավիրեք նրանց խորհել այն պահերի մասին, երբ իրենք են երախտագիտություն զգացել հավերժական ընտանիքների համար: Հարցրեք, թե արդյոք հարմար կգտնեն կիսվել դրանցով: Ապա դուք կարող եք հրավիրել նրանց խորհել ուղիների մասին, որոնցով կարող են զարգանալ և ավելի արժանի ապրել սելեստիալ արքայությանը, որպեսզի «ընտանեկան ձեռքբերումներն ավելի հրաշալի կլինեն, քան դուք կարող եք պատկերացնել» խոստումն իրականանա իրենց կյանքում:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Կիսվել հավերժական երջանկությամբ

Ավետարանի լավագույն մասն է կազմում փրկության ծրագրի մասին գիտելիքը: Մենք հրաշալի հնարավորություն ունենք հավերժ լինելու մեր ընտանիքի հետ: Այդ գիտելիքն օգնում է մեզ չկորցնել մեր հույսը, երբ աշխարհը ճնշում է մեզ: Նախագահ Այրինգն ուսուցանում է. «Մեր սիրելի Երկնային Հայրը գիտի մեր սրտերը: Նրա նպատակը մեզ երջանկություն պարգևելն է (տես 2 Նեփի 2.25): Ուստի, Նա տվեց Իր Որդու պարգևը, որպեսզի հնարավոր դարձնի երջանիկ ընտանեկան կապերը, որոնք հավերժորեն շարունակվում են: . . . Սա մի առաջարկ է, որն ուղղված է Աստծո աշխարհի եկող յուրաքանչյուր զավակի»:

Այդ օրհնությունը վերաբերում է մեզանից նրանց, ովքեր այժմ ապրում են, և նրանց, ովքեր մահացել են, սակայն միայն մեր օգնությամբ: Մեր նախնիներն այժմ հոգիների աշխարհում են և սպասում են, որ մենք պատրաստենք իրենց անունները տաճարային արարողությունների համար, որ կատարվեն իրենց համար: Սակայն, երբեմն կարող է դժվար լինել նրանց համար ախատանք կատարելը: Մենք կարող ենք շատ զբաղված լինել կամ միգուցե մենք ապրում ենք տաճարից շատ հեռու և չենք կարող հաճախ գնալ այնտեղ:

Բարեբախտաբար կան այլ ուղիներ, որոնցով մենք կարող ենք օգնել մեր նախնիներին, ինչպես օրինակ՝ ընտանեկան պատմության աշխատանք կատարելը, անուններ հավաքելը, կամ փոքրիկներին զբաղեցնելը, մինչ մեր ծնողները տաճար են գնում: Օգնելով մենք ծառայում ենք Տիրոջը *և* հավերժական

ընտանիքների հույս ենք ներշնչում նրանց, ովքեր գտնվում են վարագույրի մյուս կողմում:

ԵՐԵԽԱՆԵՐ

Ընտանիքները հավերժ են

Հիսուս Քրիստոսի Քավության և քահանայության բանալիների վերականգնման շնորհիվ մենք կարող ենք հավերժ ապրել մեր ընտանիքների հետ: Ձեր ընտանիքում ի՞նչն է ձեզ դուր գալիս: Հետևեք այս հրահանգներին և այս թղթե շղթան կարող է ներկայացնել ձեր ընտանիքին:

1. Թերթիկը երկու անգամ ծալեք մեջտեղից այնպես, որ ունենաք մեկ երկար շերտ:
2. Նկարեք մի մարդ, ով ձեռքերով բռնում է ծալված շերտի եզրերը:
3. Կտրեք կերպարը եզրերով: Մի կտրեք այն հատվածը, որտեղ ձեռքերը դիպչում են ծալված եզրերին:
4. Բացեք այն: Գրեք կամ նկարեք մի բան, ինչը ձեզ դուր է գալիս ընտանիքի յուրաքանչյուր անդամի մեջ:
5. Բազմաթիվ շղթաներ միացրեք միմյանց, եթե ունեք մեծ ընտանիք:

© 2016 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/16: Թարգմանության հաստատումը. 6/16: *First Presidency Message, August 2016*-ի թարգմանությունը: Armenian. 12868 201

Միասին սնուցել ընտանիքները

Աղոթքով ուսումնասիրեք այս նյութը և ձգտեք հասկանալ, թե ինչով կարող եք կիսվել: «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» փաստաթղթի բովանդակության հասկանալն ինչպե՞ս կմեծացնի ձեր հավատքն առ Աստված և կօրհնի նրանց, ում դուք այցելում և ուսուցանում եք: Լրացուցիչ տեղեկության համար այցելեք reliefsociety.lds.org:

Հավատք, Ընտանիք, Սփոփանք

«Ամուսինը և կինը սուրբ պատասխանատվություն են կրում սիրելու և հոգ տանելու միմյանց և երեխաների համար»:[1] «Տունը պետք է լինի սիրո և ծառայության Աստծո լաբորատորիա»,- ասել է Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը՝ Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահը:

«Մեր Երկնային Հայրը ցանկանում է, որ ամուսիններն ու կանայք հավատարիմ լինեն միմյանց, և գնահատեն իրենց երեխաներին և նրանց վերաբերվեն որպես Տիրոջ կողմից տրված ժառանգություն»:[2]

Մորմոնի Գրքում Հակոբն ասում է, որ սերը, որն ամուսինները տածում են իրենց կանանց հանդեպ, սերը, որը կանայք տածում են իրենց ամուսինների հանդեպ, և սերը, որը նրանք ունեն իրենց զավակների հանդեպ, այն պատճառներից մեկն է, որի շնորհիվ լամանացիներն ավելի արդարակյաց էին, քան նեփիացիները (տես Հակոբ 3.7):

Լավագույն միջոցը, որի օգնությամբ մենք կարող ենք սեր և ներդաշնակություն հաստատել մեր տներում, մեր ընտանիքի անդամների հետ բարյացակամորեն խոսելն է: Բարյացակամ խոսելը հրավիրում է Սուրբ Հոգին: Սփոփող Միության գերագույն նախագահ Քույր Լինդա Կ. Բըրթընը խնդրել է մեզ խորհել. «Որքա՞ն հաճախ ենք մենք կանխամտածված «բարի խոսքեր ասում միմյանց»:[3]

Լրացուցիչ սուրբ գրություններ

Հռովմայեցիս 12.10, Մոսիա 4.15, Վարդապետություն և Ուխտեր 25.5

Իրական պատմություններ

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնը կիսվել է իր մանկության հիշողություններով, որոնք նրան ապացուցել են սիրառատ ընտանիքի կարևորությունը: Երբ նա և եղբայրը դեռ փոքր էին, նրանց մայրը քաղցկեղ ուներ և ծանր վիրահատություն տարավ, որի արդյունքում աջ ձեռքը շարժելիս մեծ ցավ էր զգում: Տղաների հագուստներն արդուկելիս մայրը հաճախ կանգ էր առնում և գնում իր ննջասենյակ, որտեղ լաց էր լինում՝ մինչև ցավը կմեղմանար:

Երբ Երեց Քրիստոֆերսոնի հայրը նկատեց, թե ինչ էր կատարվում, նա գաղտնի կերպով մոտ մեկ տարի օրն անց էր կացնում առանց կեսօրին ճաշելու, որպեսզի բավականաչափ գումար խնայեր և գներ մի մեքենա, որը արդուկելը հեշտացնում էր: Բացի իր կնոջը սիրելուց, նա իր տղաների համար օրինակ ծառայեց, թե ինչպես պետք է հոգալ ընտանիքի կարիքները: Այս սիրառատ փոխաառության մասին Երեց Քրիստոֆերսոնն ասել է. «Այդ ժամանակ ես չգիտեի իմ հոր կատարած զոհաբերության և իմ մոր հանդեպ սիրուց դրդված արարքի մասին, բայց այժմ, երբ գիտեմ, ես ինքս ինձ ասում եմ՝ «Ահա, թե ինչ է նշանակում մարդ լինել»:[4]

ՀՂՈՒՄՆԵՐ

1. «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», *Լիահոնա,* նոյ. 2010, 129:
2. Ռասսել Մ. Նելսոն, «Փրկություն և վեհացում», *Liahona,* մայիս 2008, 8:
3. Լինդա Ք. Բըրթն, «Մենք միասին կբարձրանանք» *Լիահոնա,* մայիս 2015, 31:
4. D. Todd Christofferson, “Let Us Be Men,” *Liahona,* Nov. 2006, 46.

Խորհեք այս մասին

Միմյանց համար հոգ տանելն ինչպե՞ս է օգնում հրավիրել Հոգուն մեր տները:

© 2016 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/16: Թարգմանության հաստատումը. 6/16: *First Presidency Message, August 2016*-ի թարգմանությունը: Armenian. 12868 201